ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«22» հունիսի 2023թ. N 54-Ա

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 6.2 կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունվարի 19-ի N 79-Ա որոշման 2-րդ հավելվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Տրամադրել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության «Շանսի Քոնսթրաքշն Ինվեսթմենթ Գրուպ Կո» և «Շանսի Հայդրոլիկ Քոնսթրաքշն Ինջինիրինգ Բյուրո» համատեղ ձեռնարկությանը «Կապսի ջրամբարի և օժանդակ կառուցվածքների կառուցում» օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվություն՝ «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» գործունեության տեսակի «Հիդրոտեխնիկական» ենթատեսակի համար:

2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարմանը հաջորդող տասներորդ օրը՝ 2029 թվականի դեկտեմբերի 31-ը:

3. Տրամադրել Իրանի Իսլամական Հանրապետության «Թուննել Սադդ Արիանա» փակ բաժնետիրական ընկերությանը ««Ինժեներական քաղաքի» ինժեներական բիզնես աքսելերատորի շենքի, ջրավազանի և տեսահսկման և հեռահաղորդակցության համակարգերի կառուցման աշխատանքներ» օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվություն՝ «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» գործունեության տեսակի «Բնակելի հասարակական և արտադրան», «Տրանսպորտային» «Հիդրոտեխնիկական», «Էներգետիկ» և «Կապի» ենթատեսակների համար:

4. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարմանը հաջորդող տասներորդ օրը՝ 2025 թվականի նոյեմբերի 30-ը:

5. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի թույլտվությունների էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

6/22/2023

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ